ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Սիսիանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի ընտրության մրցույթի համար

ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 1593 որոշմամբ հաստատված՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 5-րդ կետի համաձայն՝

ՀՀ ԿԳՄՍՆ «Սիսիանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը:
2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1) Դիմում՝ կոլեգիալ կառավարման խորհրդի նախագահի անունով:
2) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:
3) Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը:
4) Տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 13-րդ կետի պահանջներին համապատասխան:

Փաստաթղթերի պատճենները կոլեգիալ կառավարման խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ ԿԳՄՍՆ «Սիսիանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ ք.Սիսիան, Չարենցի 12 հասցեում 2025 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2026 թվականի հունվարի 21-ը ներառյալ, ամեն օր ժամը 09 ^{00} –ից մինչև 16 ^{00}, բացի հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային (տոնական և հիշատակի) օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի փետրվարի 2-ին ժամը 14 ^{00} -ին «Սիսիանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ ք.Սիսիան, Չարենցի 12 հասցեում:

Տեղեկատվությունների համար դիմել 028322840 կամ +37494486314 հեռախոսահամարներով, փաստաթղթերն ուղարկել sisianstatecollege@mail.ru էլեկտրոնային հասցեին: